

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Հիդրոօդերկութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի
ՀՀ-ՇՄՆ-ԴՇ-24/02 պայմանագրով 2024 թվականի ընթացքում նախատեսված
միջոցառումների կատարման մասին

1. ՀԻԴՐՈՕԴԵՐԵԿՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Օդերկութաբանական դիտարկումներ

Հաշվետու ժամանակահատվածում մթնոլորտում և գետնի մակերևույթին տեղի ունեցող ֆիզիկական երևույթների ուսումնասիրման նպատակով օդերկութաբանական դիտարկումները կատարվել են հանրապետության տարածքի 42 օդերկութաբանական կայաններում՝ լրիվ ծրագրով, իսկ 24 հիդրոլոգիական դիտակետերում՝ կրճատ ծրագրով /միայն օդի ջերմաստիճանի, տեղումների, մթնոլորտային երևույթների և ձյան ծածկի բարձրության/, Համաշխարհային օդերկութաբանական կազմակերպության կողմից սահմանված կարգով և միջազգային ստանդարտներին համապատասխան 3 ժամը մեկ անգամ 00 ժամից սկսած (Գրինվիչի ժամանակով), իսկ մթնոլորտային երևույթների և եղանակի վիճակի նկատմամբ՝ շուրջօրյա:

Դիտարկումներ են իրականացվել նաև 49 ավտոմատ օդերկութաբանական կայաններում համաժամանակյա՝ յուրաքանչյուր 10 րոպե մեկ:

Դիտարկումներն իրականացվել են օդերկութաբանական բոլոր տարրերի նկատմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում Որոտանի և Վարդենյաց լեռնանցքի դժվարամատչելի, ինչպես նաև Ծաղկահովտի օդերկութաբանական կայանները գտնվել են հարկադիր պարապորդում, ինչը պայմանավորված է եղել նոր աշխատակիցների համալրման անհնարինությամբ:

Ամեն օր կազմվել է առաջիկա 5 օրվա եղանակի կանխատեսում, իսկ յուրաքանչյուր ամսվա վերջին՝ հաջորդ ամսվա օդերկութաբանական պայմանների խորհրդատվական կանխատեսումը:

Յուրաքանչյուր շաբաթ կատարվել են դիտված օդերկութաբանական պայմանների՝ շաբաթական, իսկ ամսվա վերջում՝ ամսական վերլուծություններ:

Կազմվել են հաշվետու ժամանակահատվածի ընթացքում դիտված օդերկութաբանական տվյալների ամսական աղյուսակներ:

Կատարվել են օդերկութաբանական ամենօրյա տվյալների շարունակական արխիվացման աշխատանքներ:

Կայաններից ստացված տեղեկատվությունը ենթարկվել է վերլուծական ստուգման և հանձնվել մուտքագրման բաժին՝ «CLICOM» ծրագրով օդերկութաբանական տվյալների բանկ մուտքագրման նպատակով:

Ընդհանուր առմամբ 2024թ. ընթացքում իրականացվել է 120426 հատ օդերկութաբանական դիտարկումներ:

Շահագրգիռ կազմակերպություններն ապահովվել են օդերևութաբանական ռեժիմային տվյալներով:

Հաշվետու ժամանակահատվածում տրվել է 32 նախազգուշացում օդերևութաբանական վտանգավոր երևույթների վերաբերյալ:

h/h	Երևույթի տեսակը	Չափի միավոր	անբարենպաստ երևույթի քանակը	վտանգավոր երևույթի քանակը
1.	Քամի	դեպք	136	9
2	Մառախուղ	դեպք	109	41
3	Չյուն	դեպք	6	11
4	Բուք	դեպք	3	5
5	Անձրև	դեպք	34	12
6	Կարկուտ	դեպք	45	36
7	Սաստիկ շոգ	դեպք		3

1.2. Աերոլոգիական դիտարկումներ

Հաշվետու ժամանակաշրջանում ռադիոզոնդարկում չի իրականացվել և ռադիոզոնդ բաց չի թողնվել՝ գազագեներատորի խափանման պատճառով:

1.3. Հելիոերկրաֆիզիկական դիտարկումներ

ա/ Օզոնոմետրիա

Օզոնոմետրիական դիտարկումներն իրականացվել են Ամբերդ բարձր լեռնային դժվարամատչելի օդերևութաբանական կայանում, Դոբսոնի սպեկտրոֆոտոմետրով՝ օրվա ցերեկային ժամերին պարզ երկնքի դեպքում՝ 3 - 5 անգամ:

Ամբերդ օդերևութաբանական կայանից ստացված դիտանյութերի արդյունքները սահմանված կարգով մշակվել և ուղարկվել են ՀՕԿ-ի Օզոնային և ուլտրամանուշակագույն ճառագայթման տվյալների համաշխարհային կենտրոն (WOUDC):

բ/ Ակտինոմետրիա

Ակտինոմետրական դիտարկումներն իրականացվել են 3 կայաններում՝ Երևան-ազրո, Մարտունի, Սևան: Դիտարկումները կատարվել են օրվա ցերեկային ժամերին՝ 3 ժամը մեկ անգամ /Գրինվիչի ժամանակով ժամը 03.30, 06.30, 09.30, 12.30, 15.30/, գիշերային ժամերին՝ մեկ անգամ /Գրինվիչի ժամանակով ժամը 21.30-ին/, արեգակնային կարճալիք ուղիղ, ցրված ու անդրադարձված ճառագայթման և ճառագայթային հաշվեկշռի վերաբերյալ, կատարվել է նաև գումարային երկարալիք ճառագայթման հաշվեկշռի և ազդեցության մակերևույթի ալբեդոյի հաշվարկ:

Կատարվել է ակտիվությունների արխիվային տվյալների թվայնացում ըստ համապատասխան ծրագրի, ինչպես նաև ավտոմատ օդերևութաբանական կայանների գումարային ճանապարհման տվյալների շարունակական արխիվացում:

Կատարվել է Հայաստանի բոլոր մարզերի համար ուլտրամանուշակագույն ճանապարհման ինտենսիվության բնութագրիչների մշակում՝ ինդեքսների տեսքով, ինչպես նաև Արեգակի ակտիվության ու գեոմագնիսական դաշտի վիճակի մասին տեղեկատվության մշակում:

Ընդհանուր առմամբ 2024թ. ընթացքում իրականացվել է 16795 հատ հելիոտերկրաֆիզիկական դիտարկումներ:

1.4. Ագրոօդերևութաբանական դիտարկումներ

Ագրոօդերևութաբանական դիտարկումներն իրականացվել են Երևանի մասնագիտացված ագրոօդերևութաբանական կայանում և օդերևութաբանական ցանցի 37 կայաններում:

Հանրապետության պետական կառավարման մարմիններին, մարզպետարաններին, ֆերմային տնտեսություններին և տարբեր կազմակերպություններին տրվել է անհրաժեշտ տեղեկատվություն ագրոօդերևութաբանական պայմանների մասին:

Կազմվել են.

- տասնօրյակային, ամսական (ձմռան ամիսներին), շաբաթական և եռամսյակային ագրոօդերևութաբանական տեղեկատվություններ,
- տեղեկանք աշնանացան ցորենի ցանքի, աճի և ձմեռման պայմանների վերաբերյալ,
- տեղեկանք գյուղատնտեսական աշխատանքների ժամկետների վերաբերյալ՝
 - վաղահաս կարտոֆիլի ցանքի,
 - ջերմասեր մշակաբույսերի սածիլման,

Կատարվել է՝

- աշնանացան ցորենի կենսունակության որոշման և վնասվածություն գնահատում ձմռան ցրտերից (%),
- աշնանացան ցորենի վեգետացիայի վերսկսման պահին հողի խոնավության պաշարների գնահատում ըստ գոտիների՝ փետրվարի 20-ի, մարտի 10-ի և 20-ի դրությամբ (0-20, 0-50 սմ շերտերում),
- ագրոօդերևութաբանական տվյալների շարունակական թվայնացման և արխիվացման աշխատանքներ:

Կատարվել են նաև ֆենոլոգիական կանխատեսումներ Արարատյան դաշտում ծիրանենու, դեղձենու և խաղողի վազի ծաղկման, ինչպես նաև լեռնային շրջաններում աշնանացան ցորենի մոմային հասունացման և հասկակալման ժամկետների վերաբերյալ:

Կատարվել են բերքատվության կանխատեսումներ՝

- Արարատյան դաշտի ծիրանի և խաղողի (միջին հանրապետական),

- հացահատիկային մշակաբույսերի վեգետացիայի վերսկսման, ցողունակալման և հասկակալման փուլերի (միջին հանրապետական),
- բանջարանոցային մշակաբույսերի և կարտոֆիլի (միջին հանրապետական),
- խոտաբույսերի (միջին հանրապետական) բերքի քանակների վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ 2024թ. ընթացքում իրականացվել է 13851 հատ ագրոոչերնութաբանական դիտարկումներ:

1.5. Ռադիոլոգիական մոնիթորինգ

Հիդրոոչերնութաբանական ցանցի 21 (Մեղրի կայանի դոզիմետրի անսարքության պատճառով դիտարկումներ չեն իրականացվել) կայաններում՝ ռադիոլոգիական իրավիճակի վերաբերյալ ամեն օր Գրինվիչի ժամանակով ժամը 06:00 (տեղական ժամանակով 10:00) իրականացվել են գամմա ֆոնի չափումներ:

Իրականացվել է շրջակա միջավայրի գամմա ճառագայթման դոզայի հզորության և աերոլոգիական կայանից բերված այրված թանգիֆի նմուշի ռադիոակտիվ փոշու մակերեսային խտության գումարային բետտա ակտիվության ամենօրյա չափումներ:

Կատարվել է Դիլիջանի և Սևան օչերնութաբանական կայանից բերված հողի նմուշների գումարային բետտա-ակտիվության չափումներ, ըստ անհրաժեշտության:

Կատարվել են ատոմակայանի շրջակայքից՝ Սևջուր Տարոնիկ հիդրոլոգիական դիտակետից, բերված ջրի նմուշներում կոշտ մնացորդների գումարային բետտա-ակտիվության չափումներ: Նորմայից գերազանցումներ չեն դիտվել:

Աերոլոգիական կայանում իրականացվել են ջրի նմուշի ալֆա և բետա ռադիոակտիվության չափումներ՝ ռադիոմետրի (մակնիշ՝ PKC-AT1329) միջոցով:

Կատարված չափումների արդյունքներով Երևան քաղաքում և ՀԱԷԿ-ի 30-կմ գոտում գրանցված գամմա-ֆոնի արժեքները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում չեն գերազանցել թույլատրելի սահմանները: Հանրապետության տարածքից ընտրովի սկզբունքով վերցված հողի նմուշներում գումարային բետտա-ակտիվությամբ աղտոտվածություն չի արձանագրվել:

Շրջակա միջավայրի գամմա ճառագայթման դոզայի հզորության ամենօրյա արդյունքները շաբաթվա վերջում վերահաշվարկվելուց հետո ՔՊՕԵ հեռագրի միջոցով, կոդավորված ձևով, ուղարկվել են Օբնինսկ:

Ընդհանուր առմամբ 2024թ. ընթացքում իրականացվել է 19454 հատ բետտա-ակտիվությամբ աղտոտվածության չափումներ /ռադիացիոն մոնիթորինգ/:

1.6. Հիդրոլոգիական դիտարկումներ

Իրականացվել են ռեժիմային հիդրոլոգիական ուսումնասիրություններ 80 գետային, 2 ջրանցքի (Հրազդան ՀԷԿ-ի ուղղաթեք ջրանցք, Արփա-Սևան ջրատար), 5 ջրամբարային (Արփիլիճ, Ախուրյան, Ապարան, Մարմարիկ, Ազատ) և 4 լճային (Սևանա լիճ) հիդրոլոգիական դիտակետերում: Սահմանված կարգով հիդրոլոգիական դիտակետերում իրականացվել են ջրի ելքի չափումներ, կատարվել են ջրի մակարդակի, ջրի և օդի ջերմաստիճանի, սառցային երևույթների դիտարկումներ:

Սևանա լճի 4 դիտակետերում կատարվել են ջրի մակարդակի, ջերմաստիճանի, սառցային երևույթների (առկայության դեպքում) ամենօրյա 2 ժամկետային դիտարկումներ:

Հաշվետու ժամանակահատվածում կազմվել է Սևանա լճի ամսական և 2023 թվականի տարեկան ջրային հաշվեկշիռը և տրամադրվել շահագրգիռ կազմակերպություններին, տվյալները հրապարակվել են «Հայիդրոմետ» ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքում:

Ամեն օր 47 գետային, 5 ջրամբարային և 4 լճային հիդրոլոգիական դիտակետերից, ինչպես նաև Արփա-Սևան ջրատար-Ծովինար և Հրազդան ՀԷԿ-ի ուղղաթեք ջրանցք-Գեղամական դիտակետերից ստացվել է հիդրոլոգիական ռեժիմի վերաբերյալ տեղեկատվություն, որոնց հիման վրա կազմվել են ամենօրյա հիդրոլոգիական տեղեկագրեր և տրամադրվել շահագրգիռ կազմակերպություններին, ինչպես նաև հիմնական հիդրոլոգիական տեղեկագիրը հրապարակվել է «Հայիդրոմետ» ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքում:

Կազմվել են համապատասխան ձևաչափերի տեղեկանքներ (շաբաթական և ամսական կտրվածքով) գետերում դիտված ռեժիմի, Սևանա լճի մակարդակի, Արփա-Սևան ջրատարով Սևանա լիճ տեղափոխված ջրի քանակի, ջրամբարների ջրալցվածության վերաբերյալ, շահառուներին տրամադրելու և «Հայիդրոմետ» ՊՈԱԿ-ի կայքում և սոցիալական ցանցերում հրապարակելու համար:

Կազմվել են ջրի միջին տասնօրյակային ելքերի և ջրի միջին ամսական ելքերի կանխատեսումներ 21 հիդրոլոգիական դիտակետերի համար: Գնահատվել են թողարկված կանխատեսումների արդարացումները:

Մշտական ռեժիմով «Մերձավոր Արևելքի և Սևծովյան տարածաշրջանի երկրներում հանկարծահաս հեղեղումների կառավարում» (BSMEFFG) համակարգի միջոցով դիտարկվել է հեղեղումների առաջացման ռիսկերը, որի հիման վրա տրվել են նախազգուշացումներ:

2024 թվականին գետերում կանխատեսված ջրի բարձր ելքերի վերաբերյալ տրվել է երեք նախազգուշացում:

Ապրիլի 1-ին թողարկվել և բոլոր շահառուներին է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության գետերի 2024 թվականի գարնանային վարարումների տարրերի կանխատեսում» տեղեկագիրը, որում ներառված են 83 գետային դիտակետերի գարնանային վարարումների հոսքի ծավալների, 68 դիտակետերի առավելագույն ելքերի, 63 դիտակետերի վեգետացիոն ժամանակաշրջանի միջին ելքերի, ինչպես նաև 10 ջրամբարներ և Սևանա լիճ գարնանային վարարումների ընթացքում գետերով մուտք գործող ջրի ծավալների, 2 ջրամբարներ (Ախուրյան, Ապարան) ու Սևանա լիճ գետերով մուտք գործող ջրի վեգետացիոն ժամանակաշրջանի միջին ելքերի կանխատեսումները, ինչպես նաև Սևանա լճի մակարդակի փոփոխության կանխատեսումները՝ գարնանային վարարումների ժամանակահատվածում և տարեկան կտրվածքով, և դիտարկվող 5 խոշոր ջրամբարների տարեկան առավելագույն լցվածությունների կանխատեսումները: Տեղեկագրում ներառված է նաև գարնանային վարարումների բնութագրերը ձևավորող

հիդրոօդերևութաբանական պայմանների նկարագիրը: Տեղեկագիրը հրապարակվել է «Հայհիդրոմետ» ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքում:

Շարունակվել են նախատեսված աշխատանքները հիմնական հիդրոլոգիական բնութագրիչների որոշման և հաշվարկման ուղղությամբ: Կատարվել են հիդրոլոգիական տվյալների թվայնացման աշխատանքներ:

Ավարտվել են աշխատանքները ամենօրյա օպերատիվ հիդրոլոգիական դիտարկումների տվյալների փոխանցման աշխատանքները բարելավելու և համապատասխան հաշվետվության ձևերը ստանալու և ամենօրյա հիդրոլոգիական տեղեկագիրը կազմելու ուղղությամբ և շարունակվում են աշխատանքները հիդրոլոգիական այլ հաշվետվությունների կազմման ուղղությամբ:

Ամենամյա դաշտային հիդրոլոգիական դիտարկման նյութերի հանձնման և կազմակերպչական այլ հարցերի քննարկման նպատակով 2024 թվականի փետրվարի 26-ին Հիդրոլոգիայի ծառայության գետավազանային կայանների պետերը և Սևանի հիդրոօդերևութաբանական դիտարանի լճաբանության բաժնի պետը մեկ օրով գործուղվել են քաղաք Երևան:

2024 թվականի գարնանային վարարումների հետ կապված աշխատանքները համակարգելու, նիվելիրացման և ստուգիչ ջրաչափական աշխատանքներ կատարելու նպատակով գետավազանների հիդրոլոգիական կայանների պետերը, Սևանի ՀՕԴ լճաբանության բաժնի պետը և Հիդրոգրաֆիայի, հիդրոմորֆոլոգիայի և հիդրոմետրիայի բաժնի պետը 2024 թվականի ապրիլի 16-ից մայիսի 8-ն ընկած ժամանակահատվածում, ըստ հաստատված օրերի գործուղվել են համապատասխան հիդրոլոգիական դիտակետեր:

2024 թվականի ապրիլի 1-ից սկսած ոչ աշխատանքային օրերին Ծառայության Հիդրոլոգիական կանխատեսումների բաժնում սահմանվել է հերթապահություն, օպերատիվ հիդրոլոգիական տեղեկատվության սպասարկման նպատակով:

13 անգամ ըստ սահմանված կարգի և համապատասխան ժամկետներում, Արաքս-Սուրմալու հիդրոլոգիական դիտակետում Թուրքիայի մասնագետների և «Զրառ» ՓԲԸ մասնագետների հետ համատեղ իրականացվել են ջրաչափական աշխատանքներ:

Մայիսի 26-ին Դեբեդ և Աղստև գետերում ջրի բարձր ելքերի հետևանքով առաջացած հեղեղումների վերաբերյալ անընդհատ տեղեկատվություն ապահովելու նպատակով, համապատասխան դիտակետերում իրականացվել են հաճախականացված դիտարկումներ, իսկ Ծառայության համապատասխան բաժնի կողմից պարբերաբար տրամադրվել է տեղեկատվություն ընթացիկ իրավիճակի վերաբերյալ:

Հեղեղումների հետևանքով դիտակետերի վնասների գնահատման ինչպես նաև հունների ձևախախտման և բերուկալցման արդյունքում նիվելիրացման և ջրաչափական աշխատանքների իրականացման անհրաժեշտությունից ելնելով Դեբեդի և Աղստևի գետավազանային հիդրոլոգիական կայանների պետերը հունիսի 11-14-ն ընկած ժամանակահատվածում գործուղվել են համապատասխան հիդրոլոգիական դիտակետեր:

Դոնոր կազմակերպություններին ներկայացնելու համար աստրաստվել են համապատասխան տեղեկանքներ Դեբեդ և Աղստև գետերում հեղեղումների հետևանքով

հիդրոլոգիական դիտակետերին հասցված վնասների և դրանց վերականգնման և արդիականացման համար անհրաժեշտ աշխատանքների վերաբերյալ:

Ըստ պահանջի կազմվել են բազմաթիվ տեղեկանքներ հեղեղումների ձևավորման, ընթացքի և ջրի դիտված ելքերի և մակարդակների վերաբերյալ պետական կառավարման մարմիններին, տարբեր շահագրգիռ կողմերի, միջազգային կազմակերպություններին, լրատվականներին ներկայացնելու համար:

Հրազդան ՀԷԿ-ի ջրանցք-Գեղամավան և Արփա-Սևան ջրատար-Ծովինար հիդրոլոգիական դիտակետերում պարբերաբար իրականացվել են ստուգիչ ջրաչափական աշխատանքներ: Ստուգիչ ջրաչափական աշխատանքներ են իրականացվել նաև մի շարք այլ հիդրոլոգիական դիտակետերում:

ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի №68-Ն որոշման հավելվածի 5-րդ կետի գ. ենթակետի և ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 30-ի №826-Լ որոշման հավելվածի 9-րդ կետի 32-րդ ենթակետի պահանջների կազմվել և ներկայացվել է 2023 թվականի «Հայաստանի Հանրապետության մակերևութային ջրային ռեսուրսների ամենամյա տվյալներ» տարեգիրը:

Հաշվետու ժամանակահատվածում USAID-ի կողմից իրականացվող «Հայաստանի ջրային ռեսուրսների կառավարման բարելավում» ծրագրի 1-ին բաղադրիչի (ջրային ռեսուրսների մոնիթորինգի դիտակետերի արդիականացում) շրջանակներում ծրագրի փորձագետների հետ իրականացվել են հերթական շրջայցեր արդիականացվող հիդրոլոգիական դիտակետեր:

Իրավաբանական և ֆիզիկական անձանց, ինչպես նաև ԲՈՒՀ-երից ստացված գրությունների հիման վրա պատրաստվել և տրամադրվել է անհրաժեշտ հիդրոլոգիական տեղեկատվություն, այդ թվում հաշվարկվել են հանրապետության գետերի տարբեր գետահատածքների բնապահպանական թողքի ամսական արժեքները և այլն:

2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Սևանա լճի մակարդակը կազմել է 1900.39 մ, որը նախորդ տարվա՝ 2023 թվականի, նույն օրվա մակարդակի՝ 1900.17 մ, համեմատ բարձր է 22 սմ-ով և նույնքանով բարձր է նաև 2024 թվականի հունվարի 1-ի մակարդակի՝ 1900.17 մ, համեմատ:

Ջրամբարների ջրալցվածությունը 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է. Արփիլիճ ջրամբարում՝ 22.20 մլն մ³, Ախուրյանի ջրամբարում՝ 329.18 մլն մ³, Ապարանի ջրամբարում՝ 15.83 մլն մ³, Մարմարիկի ջրամբարում՝ 5.226 մլն մ³, Ազատի ջրամբարում՝ 22.65 մլն մ³:

2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ դիտարկվող 5 ջրամբարներում ջրի ծավալների գումարային մեծությունը կազմել է 395.09 մլն.խոր.մ, որը 2023 թվականի նույն օրվա մեծության՝ 229.13 մլն.խոր.մ, համեմատ **165.96** մլն.խոր.մ-ով, ավել է:

Արփա-Սևան ջրատարով Սևանա լիճ տեղափոխված ջրի քանակը 2024 թվականին կազմել է **185.146** մլն.խոր.մ, որը **70.690** մլն.խոր.մ-ով ավել է 2023 թվականին Սևանա լիճ տեղափոխված ջրի քանակից:

2024 թվականին Սևանա լճից ոռոգման նպատակով ջրի բացթողումը սկսվել է հունիսի 16-ից և շարունակվել մինչև սեպտեմբերի 16-ը ներառյալ: Լճից բացթողնված ջրի

գումարային ծավալը ըստ Հրազդան ՀԷԿ-ի ուղղաթեք ջրանցքի Գեղամավան դիտակետի հունիսի 16-ից սեպտեմբերի 16-ը ներառյալ կազմել է **131.038** մլն.խոր.մ, որը **97.196** մլն.խոր.մ-ով պակաս է 2023 թվականի ընթացքում լճից բացթողնված ջրի գումարային ծավալից (2023 թվականին Սևանա լճից ջրի բաց թողումը սկսվել է մայիսի 14-ից և շարունակվել մինչև սեպտեմբերի 14-ը ներառյալ և կազմել է 228.234 մլն.խոր.մ):

Ընդհանուր առմամբ 2024թ. ընթացքում իրականացվել է 74766 հատ հիդրոլոգիական դիտարկումներ:

1.7. Ռադիոլոկացիոն դիտարկումների իրականացում, մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության աշխատանքներ.

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են.

Մարզային հակակարկտային կենտրոնների պետերը մարզպետարաններում և համայնքապետարաններում կազմակերպվել են հանդիպումներ՝ կոորդինացվել են կայանքների համատեղ շահագործման աշխատանքները, կազմվել հեղուկ գազի գնման և վճարման ժամանակացույցերը: Նախապատրաստվել են համայնքապետարանների և «Բուֆան» ՍՊԸ-ի հետ պայմանագրերի կնքման աշխատանքները:

Մաքրվել, ստուգվել և վերանորոգվել են՝ կոնսերվացված գազագեներատորային հակակարկտային կայանքներից (այսուհետ՝ Կայանք) ապամոնտաժված հանգույցները, կենտրոններում տեղադրված հեռակառավարման համակարգերը, ալեհավաքները, համակարգչային տեխնիկան, այլ սարքերն ու սարքավորումները:

«Հայիդրոմետ» ՊՈԱԿ-ի տնօրենի 2024 թվականի մարտի 11-ի №226-Ա հրամանի հիման վրա ապակոնսերվացվել են ՊՈԱԿ-ին պատկանող թվով 234 կայանքները, երկու ՄՌԼ-5 ռադիոլոկացիոն կայանները, ավտոնոմ սնուցման գեներատորները, օդերևութաբանական սարքերը, ռադիոկապի միջոցներն ու այլ սարքերը սարքավորումները:

Հակակարկտային ծառայության կենտրոնական ապարատի կողմից համակարգվել և աջակցություն է ցուցաբերվել մարզային հակակարկտային կենտրոններին՝ հակակարկտային համակարգերի ու այլ տեխնիկական միջոցների վերանորոգման միջոցառումների կատարման ընթացքում:

Իրականացվել են Արարատի մարզի «Հայիդրոմետ» ՊՈԱԿ-ի թվով 47 գազագեներատորային հակակարկտային կայանքների տեխնիկական անվտանգության փորձաքննությանն ուղղված աշխատանքներ, որի արդյունքում տրվել են դրական եզրակացություններ:

Հուլիսի 16-ից 19-ը հիդրոօդերևութաբանական գործիքների և տեխնիկական միջոցների սպասարկման ծառայության ստանդարտացման և ստուգաճշտման բաժնի և Լոռու ՌՀԿ-ի աշխատակիցները համատեղ կատարել են Լոռու ՌՀԿ ՄՌԼ-5 կայանի 3սմ և 10սմ ալիքի երկարության ընդունիչների չափաբերման և ալեհավաքի ղեկավարման համակարգի վերանորոգման աշխատանքներ:

ՆԳՆ Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն ՊՈԱԿ-ի աշխատակիցներն այցելել են Արմավիրի մարզ, ստուգել՝ Մեծամոր և Բաղրամյան համայնքների հակակարկտային կայանքների աշխատունակությունն ու անվտանգությունը:

Օգոստոսի 14-ից 16-ը հիդրոօդերևութաբանական գործիքների և տեխնիկական միջոցների սպասարկման ծառայության ստանդարտացման և ստուգաճշտման բաժնի և Լոռու ՌՀԿ-ի աշխատակիցները համատեղ կատարել են Լոռու ՌՀԿ ՄՌԼ-5 կայանի ՄԻ-

316 և ՄԻ-297 մագնետրոնների ստուգման աշխատանքներ: Տեղադրվել է նոր ՄԻ-316 մագնետրոն:

Հակակարկտային ծառայության բոլոր մասնագետներն անցել են տեխնիկական անվտանգության կանոնների պլանային հրահանգավորում:

Մարզային հակակարկտային կենտրոններում իրականացվել են անձնակազմի գիտելիքների և հմտությունների բարձրացմանն ուղղված մասնագիտական դասընթացներ:

Հակակարկտային ծառայության և ՆԳՆ Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն ՊՈԱԿ-ի համատեղ աշխատանքի շնորհիվ իրականացվել են «Հայիդրոմետ» ՊՈԱԿ-ի գազագեներատորային հակակարկտային կայանքների տեխնիկական անվտանգության փորձաքննությանն ուղղված աշխատանքներ, որի արդյունքում տրվել են դրական եզրակացություններ:

2024թ-ին ակտիվ ներգործության են ենթարկվել 493 կարկտավտանգավոր ամպ, որի արդյունքում կատարվել է 1440583 կրակոց:

Գրանցվել են կարկտահարության դեպքեր հետևյալ բնակավայրերում՝
Արագածոտնի մարզ՝ Կարբի, Օհանավան, Աղծք, Ագարակ, Ոսկեվազ, Ոսկեհատ, Ղազարավան:

Կոտայքի մարզ՝ Արագյուղ:

Արմավիրի մարզ՝ Բագարան, Երվանդաշատ, Կողբավան, Վանանդ, Արտամետ, Արաքս (Արմ.), Տանձուտ, Արմավիր, Այգեշատ, Արգավանդ, Արևիկ, Նոր Արտագերս, Բամբակաշատ, Ամասիա, Ջրառատ, Նորավան, Փշատավան, Եղեգնուտ, Նալբանդյան, Բերքաշատ, Նորակերտ, Բաղրամյան, Գետաշեն, Շենավան, Հուշակերտ, Վանանդ, Շենիկ, Քարակերտ, Արգինա, Լեռնագոգ, Դալարիկ, Տալվորիկ, Արևադաշտ, Արաքս, Այգեվան, Հացիկ, Խանջյան, Լուկաշին, Լենուղի, Աղավնատուն, Դողս, Ամբերդ, և Լեռնամերձ, Նոր Կեսարիա:

Արարատի մարզ՝ Ռանչպար, Երասխ, Արմաշ:

Շիրակի մարզ՝ Ազատան, Ղարիբջանյան, Բայանդուր, Ոսկեհասկ, Ախուրյան, Հայկավան:

Լոռու մարզ՝ Ագարակ, Յաղդան, Լեջան, Ուռուտ, Բովաձոր, Գարգառ, Գյուլագարակ, Ամրակից, Կողես, Կուրթան:

2024թ-ին մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության օրերի թիվը կազմում է 92 օր:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

2.1. Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի իրականացում

2024 թվականի ընթացքում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգը (ջրի նմուշառում, դաշտային հետազոտություններ, ֆիզիկաքիմիական և հիդրոկենսաբանական անալիզներ, որակի գնահատում) իրականացվել է հանրապետության 6 ՋԿՏ-ում ընդգրկված ջրային ռեսուրսների (գետեր, ջրամբարներ, ջրատարներ, Սևանա լիճ) 142 դիտակետում: Ջրի նմուշներում դիտարկվել են ջրի որակի բնութագրական 45

Ֆիզիկաքիմիական՝ հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, և մեկ հիդրոկենսաբանական՝ մակրոանողնաշարավորներ, ցուցանիշներ:

Ընդհանուր առմամբ որոշվել է 75800 ցուցանիշ:

2.2. Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի իրականացում

2024 թվականի ընթացքում մթնոլորտային օդի որակի դիտարկումներ կատարվել են հանրապետության 10 բնակավայրում օդի նմուշառման երկու եղանակով՝ ակտիվ և պասիվ: Մթնոլորտային օդում ուսումնասիրվել են ազոտի և ծծմբի երկօքսիդների, փոշու, փոշում պարունակող մետաղների ու գետնամերձ օզոնի պարունակությունները:

Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ և Ծաղկաձոր քաղաքներում մթնոլորտային օդի որակի դիտարկումներն իրականացվել են 15 ստացիոնար դիտակայանում՝ ակտիվ նմուշառման եղանակով: Պասիվ եղանակով նմուշառումներ իրականացվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Կապան, Քաջարան, Չարենցավան և Ծաղկաձոր քաղաքների 214 դիտակետում:

2024 թվականին **ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի միջոցառումների շրջանակում որոշվել է 75300 ցուցանիշ:**

2.3. Հողերի աղտոտվածության մոնիթորինգի իրականացում

2024 թվականին հողերի աղտոտվածության մոնիթորինգի միջոցառումների շրջանակում որոշվել է **10000 ցուցանիշ:**

2.4. Հայաստանում օդի անդրսահմանային աղտոտման մոնիթորինգի իրականացում

2024 թվականին մթնոլորտային օդի անդրսահմանային աղտոտվածության մոնիթորինգի Ամբերդի դիտակայանում իրականացվել է մթնոլորտային օդի և մթնոլորտային տեղումների մոնիթորինգ և որոշվել է 10395 ցուցանիշ:

2.5. Արաքս գետի աղտոտվածության հայ-իրանական համատեղ մոնիթորինգի իրականացում

«Արաքս գետի ջրի աղտոտվածության հայ-իրանական համատեղ մոնիթորինգի ծրագրի» շրջանակում Արաքս գետի հայ-իրանական սահմանային հատվածում 2024 թվականի ընթացքում իրականացվել է ջրի և հատակային նստվածքների մոնիթորինգ, որոշվել է 2040 ցուցանիշ:

2.6. Իրականացվել է շրջակա միջավայրի օբյեկտներում (հող և ջուր) կայուն օրգանական աղտոտիչների մնացորդային քանակների մոնիթորինգ՝ 300 ցուցանիշ:

2.7. Շրջակա միջավայրի նախարարության կայքի սպասարկում, «ՀԱՅՀԻԴՐՈՄԵՏ» ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքի սպասարկում, բնապահպանական տեղեկատվության

հավաքագրում, մշակում, վերլուծում, բազաների սպասարկում, օդի պահանջվող օգտագործում (ՕՊՕ) համակարգի սպասարկում, Էկոպորտալում ինդիկատորների գնահատում, մշակում, թարմացում, պորտալի սպասարկում

2024 թվականին ապահովվել է շրջակա միջավայրի նախարարության կայքի (<http://env.am>) անխափան աշխատանքը: Շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում տեղադրվել են լուրեր, հայտարարություններ, բնապահպանական փորձաքննության նախագծեր, փորձաքննության եզրակացություններ, ՍԹԱ նախագծեր, մոնիթորինգի եռամսյակային և տարեկան տեղեկագրեր, եղանակային կանխատեսումներ ամենօրյա (աշխատանքային օրեր) ռեժիմով, գետերի, լճերի և ջրամբարների վիճակի, Սևանա լճի վերաբերյալ տեղեկանքներ, նախարարության և համակարգի կառույցների աշխատակազմերի փոփոխություններն ըստ ստացված հրամանների, նախարարության թափուր հաստիքների պարբերական թարմացումներ, բնապահպանական ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի ցանկերի թարմացումներ «Օրենսդրություն» բաժնի համապատասխան ենթամենյուններում: Բացվել են նոր բաժիններ, տեղադրվել համապատասխան տեղեկատվությունը, կատարվել են եռալեզու թարգմանություններ:

ՇՄՆ կայքի համապատասխան էջերի թարմացումները և նյութերի եռալեզու թարգմանությունները կատարվել են ՀՀ Բնապահպանության նախարարի 02.10.2017թ. թիվ 338-Ա հրամանով հաստատված կարգի համաձայն:

Սպասարկվել է «ՀԱՅՀԻԴՐՈՄԵՏ» ՊՈԱԿ-ի <http://meteomonitoring.am> կայքը, կայքում ավելացվել են մի շարք էջեր, բաժիններ, ենթաբաժիններ: Ամենօրյա ռեժիմով կայքում տեղադրվել են եղանակային կանխատեսումներ, գետերի ելքերի վերաբերյալ տեղեկատվություն: Զրամբարների լցվածության, Սևանա լճի մակարդակի, ջրի որակի, մթնոլորտային օդի որակի վերաբերյալ տեղեկատվությունները հրապարակվել են կայքի համապատասխան բաժիններում: Բարելավվել են կայքի մի շարք էջեր, կատարվել է դիզայնի փոփոխություն: Իրականացվել է կայքում տեղադրված նյութերի և մենյունների եռալեզու թարգմանություն:

Սպասարկվել են «ՀԱՅՀԻԴՐՈՄԵՏ» ՊՈԱԿ-ի սոցիալական՝ ֆեյսբուքյան, ինստագրամյան և լինքինդինյան էջերը: Ավելացել է հետևորդների թիվը սոցիալական ցանցերում:

Սպասարկվել է Հայաստանի էկոպորտալի կայքը՝ ecoportal.am: Թարմացվել են C2, C3, C4, C5, C10, C11 ինդիկատորները: EU4Sevan ծրագրի տեխնիկական թիմի հետ համատեղ, իրականացվել են նորացված էկոպորտալի կայքի ուսումնասիրում, սխալմունքների, ոչ ճիշտ աշխատող ֆունկցիաների շտկում:

Օդի որակի մոնիթորինգի տվյալների համար ստեղծված բազայում պարբերաբար ավելացվել են բոլոր աղտոտիչների ընթացիկ տվյալները:

Իրականացվել է մակերևութային և ստորերկրյա ջրերի, մթնոլորտային օդի մոնիթորինգի տվյալների ամփոփում, գնահատում և վերլուծություն, բազաների թարմացում, տվյալների սահմանված կարգով տրամադրում և հրապարակում: Ընթացիկ ժամանակահատվածում շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքներն ամփոփվել են ամսական տեղեկանքներում, եռամսյակային տեղեկագրերում:

Պատրաստվել և հրրապարակվել է «ՀՀ տարածքում 2023 թվականին ՀՀ տարածքում մթնոլորտային օդի աղտոտվածության վիճակի մասին» ամփոփագիրը:

Պատրաստվել է «ՀՀ տարածքում 2023 թվականին մակերևութային ջրերի որակի մասին» ամփոփագիրը:

Պատրաստվել է «ՀՀ շրջակա միջավայրի վիճակի մասին» 2023 թվականի տարեգիրքը:

2.8. «Բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոնի» (Օրիուս կենտրոնի) սպասարկում

2024 թվականին Բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոնի (Երևանի Օրիուս կենտրոն) կողմից, հիմք ընդունելով Օրիուսի կոնվենցիայի դրույթները, իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- սեմինարների, բաց դասերի, քննարկումների կազմակերպում,
- աջակցություն հասարակական լուսնների կազմակերպմանը,
- իրավական ակտերի նախագծերի քննարկումների կազմակերպում՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի հանրային քննարկում,
- հասարակությանը տեղեկատվության տրամադրում, լուսաբանում և տարածում,
- գրադարանի և ֆիլմադարանի այցելուների սպասարկում, համագործակցություն բնապահպանական ոլորտի ՀԿ-ների և այլ կազմակերպությունների հետ,

Սեմինարների, քննարկումների որոշ մասը կազմակերպվել են օնլայն հարթակներում:

Կազմակերպվել են միջոցառումներ՝ նվիրված Անտառների, Զրի և Օդերևութաբանության համաշխարհային օրերին:

Տեղի է ունեցել Օրիուս կենտրոնի խորհրդի առաջին նիստը:

2.9. Ստորերկրյա քաղցրահամ ջրերի մոնիթորինգի իրականացում

2024 թվականին ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիթորինգն իրականացվել է 6 ԶԿՏ-ում ընդգրկված 119 ստորերկրյա ջրադբյուրներում, **որտեղ որոշվել է 18767 ցուցանիշ, ստորերկրյա քաղցրահամ ջրերի որակի մոնիթորինգի միջոցառման շրջանակներում որոշվել է 4400 ցուցանիշ:**

2.10. Թափոնների հաշվառում, դասակարգում և վերլուծություն

Թափոնների պետական կադաստրի ստեղծման և վարման աշխատանքներին աջակցության շրջանակներում, թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների ռեեստրների ստեղծմանն աջակցության նպատակով հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել են թափոնների **գոյացման, վերամշակման ու**

օգտահանման 20 օբյեկտներ, այդ թվում՝ 16 թափոններ գոյացնող օբյեկտներ և 4 թափոններ վերամշակող և/կամ օգտահանող օբյեկտներ: Օբյեկտների ընտրության չափորոշիչներն են՝ օբյեկտը գոյացնում է թափոններ կամ օբյեկտը վերամշակում/օգտահանում է թափոններ կամ վերոնշյալ երկու չափորոշիչների համակցությունը: Ուսումնասիրության ընթացքում հավաքվել է հետևյալ տեղեկատվությունը՝ օբյեկտի գործունեության տեսակը, գտնվելու վայրը, թափոնների անվանացանկը, գոյացման ծավալները, որակական և քանակական բնութագրերը, տեղեկություններ՝ թափոնների գործածության և դրանց գոյացման ծավալների ու վտանգավորության աստիճանի նվազեցման վերաբերյալ:

Թափոնների պետական կադաստրի ստեղծման և վարման աշխատանքների աջակցության շրջանակներում, թափոնների և դրանց օգտագործման ու վնասազերծման տեխնոլոգիաների վերաբերյալ տվյալների բանկը համալրելու նպատակով, հաշվետու ժամանակահատվածում սումնասիրվել են թափոնների օգտահանման, **վնասազերծման 16 տեխնոլոգիա և երկրորդային հումքի վերամշակման 9 մեթոդ:**

Թափոնների պետական կադաստրի ստեղծման և վարման աշխատանքների աջակցության շրջանակներում, թափոնների հեռացման վայրերի ռեեստրների ստեղծմանն աջակցության նպատակով հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է ուսումնասիրություն **թափոնների հեռացման 11 վայրում:** Մասնավորապես ուսումնասիրվել են **Կոտայքի մարզի Գառնի խոշորացված համայնքի, Լոռու մարզի Սպիտակ խոշորացված համայնքի, Արագածոտնի մարզի Աշտարակ խոշորացված համայնքի, Տավուշի մարզի Իջևան խոշորացված համայնքի Այգեհովիտ գյուղի, Գեղարքունիքի մարզի Մարտունի, Գավառ խոշորացված համայնքների, Լոռու մարզի Ստեփանավան խոշորացված համայնքի, Լոռու մարզի Վանաձոր խոշորացված համայնքի, Արմավիրի մարզի Մեծամոր խոշորացված համայնքի, Կոտայքի մարզի Աբովյան խոշորացված համայնքի և Կոտայքի մարզի Եղվարդ խոշորացված համայնքի** գործող աղբավայրերը: Աղբավայրի ուսումնասիրության ժամանակ հետազոտվում են մի շարք գործոններ, որոնք հնարավորություն կտան պատկերացում կազմել ոչ միայն տվյալ աղբավայրում տեղադրվող թափոնների ծավալի և տեսակի մասին, այլև դրանց տեղափոխման և տեղադրման պայմանների ինչպես նաև դրանցից բխող հնարավոր ռիսկերի մասին: Վերոնշյալ տեղեկատվությունը կարող է ստեղծել հենք որոշում կայացնողների համար կանխարգելելու՝ կամ նվազագույնի հասցնելու վերոնշյալ թափոնների վնասակար ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա: Ուսումնասիրման ժամանակ հավաքվում են այնպիսի տվյալներ ինչպիսիք են՝ աղբավայր տեղադրվող թափոնների քանակը, այն համայնքների ցանկը որոնցից գոյացող թափոնները տեղադրվում են տվյալ աղբավայրում, բաց այրման օջախների կամ հետքերի առկայությունը, բաց այրման հաճախականությունը, ուսումնասիրվող աղբավայրի կարգավիճակը, աշխարհագրական դիրքը, աղբավայրի մակերեսը, ցանկապատի, պահակատան, ջրամատակարարման և հոսանքի առկայությունը, տվյալ աղբավայրում թափոններ տեղադրող օպերատորի մասին տեղեկատվություն, ինչպես նաև այն բնակչության թվի մասին, որը գոյացնում է աղբավայր տեղափոխվող թափոնները:

«Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայով ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարմանն աջակցելու նպատակով հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է նմուշառման ենթակա աղբավայրի ընտրություն: Աղբավայրի ընտրության հիմնական չափորոշիչը բաց այրման առկայությունն է, որը հանդիսանում է ոչ միտումնավոր արտադրված Կայուն Օրգանական Աղտոտիչների (UPOPS)՝ մասնավորապես պոլիքլորացված դիբենզոդիօքսիների և դիբենզոֆուրանների խոշոր աղբյուր: Աղբավայրի ընտրության ժամանակ հաշվի են առնվում նաև այնպիսի չափանիշներ ինչպիսիք են՝ աղբավայրի աշխարհագրական դիրքը, քամիների վարդը, աղբավայրի հեռավորությունը բնակավայրերից, արտավայրերից, մակերևույթային և ստորերկրյա ջրերից, ինչպես նաև առողջարաններից և բնության հատուկ պահպանվող տարածքներից: Այս տարվա ուսումնասիրությունների համար ընտրվել է «Իջևանի աղբավայրը»: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է նաև ընտրված աղբավայրի նմուշառում: Մասնավորապես՝ աղբավայրից և նրան հարող տարածքից վերցվել է 12 միջինացված, ներկայացուցչական նմուշ: Վերված նմուշները հանձնվել են ՊՈԱԿ-ի կենտրոնական լաբորատորիա՝ դրանցում ԿՕԱ-ների մնացորդային քանակությունների որոշման համար:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են ՀՀ տարածքում 2023թ. առաջացած թափոնների վերաբերյալ կազմակերպությունների կողմից ներկայացված վարչական վիճակագրական հաշվետվությունների ուսումնասիրման և վերլուծության աշխատանքները:

Իրականացվել են վտանգավոր թափոնների անվտանգ գործածությանը ներկայացվող պահանջների ուսումնասիրման աշխատանքները մասնավորապես՝ «Կենցաղային թափոնների էկոլոգիապես համահունչ կառավարման» տեխնիկական ուղեցույցի մշակումը:

3. ԱՆՏԱՌԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

2024 թվականին Անտառների և կենսաբազմազանության մոնիթորինգի ծառայության կողմից իրականացվել են **անտառներում 45 դիտարկումներ և ուսումնասիրություններ): Անտառտնտեսությունների և բնության հատուկ պահպանվող տարածքների ընդգրկվածության աստիճանը կազմել է 80 տոկոս:** Անտառպահպանության, մթերված և իրացված թափուկ վառելիքայտի, հրդեհված տարածքների, անտառվերականգնման, հատատեղերի և անտառխախտման արձանագրությունների ուսումնասիրություններ են իրականացվել թվով 3 ԲՀՊՏ-ների և «Հայանտառ» ՊՈԱԿ 8 անտառտնտեսություն մասնաճյուղերի սահմաններում: Աշխատանքների արդյունքում ուսումնասիրվել են «Ձանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ «Խոսրովի անտառ» պետական արգելոց» և «Սևան» ազգային պարկ»-ում, ինչպես նաև «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Հրազդանի», «Արագածոտնի», «Վայոց Ձորի», «Վանաձորի», «Ստեփանավանի», «Թումանյանի», «Արծվաբերդի», «Իջևանի» անտառտնտեսություն մասնաճյուղերում: Ուսումնասիրվել են պահպանության աշխատանքների

կազմակերպվածությունը, ուշադրություն է դարձվել անտառային հրդեհներին և հակահրդեհային անվտանգության պարտադիր միջոցառումների իրականացմանը և առկա մի շարք այլ հույժ կարևոր հիմնախնդիրներին:

Ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է 21 ապօրինի հատման օջախներ, որոնցում հատված ծառերի քանակը հասնում է մինչև միքանի հարյուրի:

Ուսումնասիրվել է 2019-2024թթ.-ին իրականացված անտառվերականգնման աշխատանքների ընթացիկ վիճակը, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 52 հա: Հաշվարկվել է ծառերի կաչողականությունը, որոշ դեպքերում իրականացվել է մակերեսային հաշվարկներ և քարտեզ-սխեմաների կազմում:

Ուսումնասիրվել է 14 հատատեղ : Բացահայտվել են հատատեղերում առկա մի շարք թերություններ, ինչպիսիք են՝ հատման տեսակին ոչ համապատասխան ծառերի ընտրություն, համարակալումների անընթեռնելիություն, անտառահատման տոմսում նշված վայրի և հատատեղի իրական վայրի անհամապատասխանություն:

«Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ում իրականացրել են 2023 թվականի ընթացքում փայտանյութի մթերման իրացման, անտառային պահաբաժինների, աշնանայի ստուգումների արդյունքների, ասեղնատերևավորների վնասատուներով վարակված օջախների, տնկարանում աճեցվող տնկիների և պահպանության վիճակի մասին դիտարկում-ուսումնասիրություններ, ինչպես նաև նախապես ընտրվածք տարածքներում կենսաբազմազանության ինդիկատոր տեսակների մոնիթորինգ:

Ուսումնասիրություններ են իրականացվել հրդեհված 142 հա տարածքի վրա: